

ՀԱՍՏԷ

édaction du Journal Arménien "ARCHALOUYCE" Hotel d'Arménie S. Bulbulian Egypte) LE CAIRE

Directeur EGHICHÉ TOROSSIAN

Ժամանցումները մասնաւոր պայմաններով կ'ընդունուին:

Զեռագիրները եւ չեմ տուիր:

ԱՐՁԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆԿԱԽ ՀԱՅԱԹԵՐԹ

ԱՂԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԿԱԽ ՀԱՅԱԹԵՐԹ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲՈՒՄԱՆՈՐԴՎՈՐՈՒԹԻՒՆ

ՊՅՊ

Տարեկան

40 ԼՂ

Վեցամսեայ

20

ԱՐՏԱՍՏՄԱՆ

Տարեկան

12

ԸՐ

Ապագի բաժանորդագրութիւն չի' ընդունուիր:

ԳՅԹ 20

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ ԵՂԻՇԷ ԲՈՐՈՍՅԱՆ

Արտակազ եգիպտական կառավարութեան

ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԳԱՆՁԱՊԻՏ Ս. ՊԻՆԼՊԻՆԵԱՆ

ԳՅԹ 20

Մեր ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

«Արշալոյս» ի հրատարակութեան ներկայ շրջանին վեցերորդ ամիսը թեւեղտեցինք և տակաւին մեր յարգելի բաժանորդներէն շատերը իրենց վճարումը ըրած չեն:

ՈՒՐՈՒԱԿԱՆ ԳՕՍԻԹԷ (Le Comité Fantôme)

Այս վերնագրով՝ Մէթուր Տիգրան Ասատուրեան, որդի փաստաբան Տիգր Բ. Ասատուրեանի յօդուած մը հրատարակած է Լա Պարս Էժիպտիէն ի վերջնութեամբ թիւերէն մէկուն մէջ, և համառօտ պատմականը ընելով Համիտական տխուր անցելոյն և անոր օրով պատահած անորակելի խճճագրութիւններուն և չարքը գերազանցող լըրտեական խմբաւորութիւններուն, կը անցնի Թուրքիոյ արդի կառավարութեան ղեկը իր ձեռքերուն մէջ բռնող «Միութիւն և Յաւատարմութիւն» դոմիթէին, ու բուն ոճով մը կը քննադատէ ասոնց ալ պարբերական արարքները, որ ո'չ նուազ պախարակելի կը գտնէ՝ որքան Համիտական ղեկավարները:

«Միութիւն և Յաւատարմութիւն» Գոմիթէն, կ'ըսէ երիտասարդ քննադատը, հակառակ իր խաբուսիկ պիտակին (étiquette) ամենուրեք բանասիրութիւնը սերմանեց և երկիրը սնանկութեան անելին մէջ մղեց այն ատենէն ի վեր, յորում գահազուրկ Սուլթանին խըլեակներուն վրայ կոխելով անցաւ իր ձեռքին մէջ անհեղու արդի կառավարութեան ղեկը:

«Բանի մը ամիսներէ ի վեր, կը ըսէ կորովաբեր յօդուածագիրը, եգիպտոսի խաղաղութիւնը բնաջնջած է լրտեսութիւնը: Ո՛չ ոք կարող է անձնավստահ քայլ մը առնել, կամ գարեջրատան մը պատրջամին վրայ հանգչել և յարաբերութեան մանել մէկուն հետ, առանց լրտեսուելու այս սովորուկ


ու խոտուաղէմ մարդերէն, որոնք ամենուրեք քայլերուս կը հետեին ստուերներու պէս:»

«Ինկարանը Տեղակալ Սատրգղէին, կը յաւելու աշխոյժ յօդուածագիրը, որ 1908 ի յեղափոխութեան կազմակերպիչն է, և թերևս Օսմանեան կայսրութեան մէջ ամենէն ազատամիտ մարդը, մասնաւոր խընամքով յաճախուած է «Արուական Գոմիթէին» գործակալներովը:

«Պէտք էր որ՝ կ'առաջարկէ յանդուգն Մէթուր Տիգրան» - արդի պարագաներուն մէջ արդարև յանդրգնութիւն կրնայ նկատուիլ այս գրեկակերպը - ճաշիտ, թալէաթ, էնվէր պէյ կամ փաշա եռապետութիւնը (triumvirat) որ բաւական իշխեց Թուրքիոյ դժբաղդ ճակատագրին վրայ՝ հասկնայ վերջապէս թէ՛ իր ժամը հասած է թողու կառավարութիւնը և անշուղի խորատուցուիլ մոռացութեան գրկին մէջ:»

Հոս կ'ընդհատենք երիտասարդ փաստաբանին դիտողութիւնները, միմիայն յիշեցնելով իրեն թէ՛ իր ակնարկած լրտեսական համախըմբուները լոկ վերոյիշեալ եռապետութեան արանեակները կրնան եղած ըլլալ թէ՛ խառնուրդէ մը բաղկացած ըլլալու են տարբեր կազմակերպութիւններէ ստացուած օժանդակութիւններով, որ վերջերս այս ու այն անունը, անձը, մէկուն հմայքը, միւսին համբաւն ու հարստութիւնը, ուրիշի մը մտաւոր կարողութիւնները չարաշահելու ասակութիւն ցոյց կուտան... պարագայ մը՝ որ կարծէր ուշագրութիւնը գրաւած ըլլալ խոկուն փաստաբանին՝ իր կուռ յօդուածը շարագրելէ յառաջ, որպէսզի այսպէսով «Համերաշխական» կատակներու տարտաբած ժպիտը թոյնեցուցած չըլլար... և Պարթևահասակ արշաւանք մը իրեն դէմ չի հանէր...»

Արդարև Տիգր Տիգրան Ասատուրեանի գրեկակերպը շատ սահուն է, շատ իմաստալից, շատ վըճռական է, սակայն մեր արդի հորիզոնին վրայ տիրող խաղքութիւնները, վատութիւններն ու գաւազրութիւնները նկարագրելու համար մէկ երկու սիւնակ բաւական չեն:



ԵՐՈՒԱՆԻ ԱՂԱՔՈՆ ՊԷՑ Հ. Բ. Ը. Միտքեան կարկառուն սիւնեակ մեկը:

պէտք է քանի մը գարեք ետ ակնարկել՝ հանդիպելու համար Հաւատարմական դարերուն, որոնց Մօսա մանրակարներն են արդի ըսող պատահարները...

Մաղթենք որ մեր փայլուն ապագայ խոտացող երիտասարդ հրապարակագիր - փաստաբանը այս վաճօրհաններուն դառնութիւններէն չի ճաշակէ... Գահլէ ԵՆԿԱՆՈՎՐԱ

ԴԵՂՆԱԾ ԹՈՒՂԹԵՐ ԳՍՅԼ ԵՒ ՄԱՔԻ

«Պաշտելի Տիգրանիկս, «Աւթն օրէ ՚ի վեր քեզ չ'եմ տեսներ, Ամենօրեայ այցելութիւններուս յեղակարծ ընդհատումը չարաղէպ հիւանդութեան մը վերագրելու մօտ էի, երբ երէկ՝ կէս օրէն ետքը՝ Մէզար - Պուրնույի շոգնաւուն մէջ, հանդիպեցայ Արուսեակին, որ ինձի իմացուց թէ՛ փառք Աստուծոյ ֆիզիքական սկարութիւն մը չ'ունիս, այլ միայն դրամական նեղու-

թեան մը մէջ կը գտնուի. նեղութիւն՝ որուն կարելի եղածին չափ վաղանցուկ բնոյթ կը մաղթեմ, Անուշապ կը յիշես այս Արուսեակը. գայն վեց ամիս առաջ ներկայացուցի քեզի Մոլորակասիրաց Ընկերութեան դիմակաւոր եւ անդիմակ պարանանդէսին մէջ. ուր ո'չ ոք տեսնուեցաւ անդիմակ, Խնդալս չ'եմ կրնար զպել. երբ միտքս կուգայ այն խայտառակ զէպքը, որ այն գեշեր եկաւ մեր գլխուն. քու եւ իմ. եւ զոր հարկաւ դուն ալ մոռցած չ'ես. վասն զի կեանքի մէջ կան անանկ արտաոց պատահարներ, որոնք երբեք չ'են մոռցուիլու Այսու հանդերձ, թերևս վերջին անգամ քեզ խնդացնելու համար կուզեմ հոս վեր ՚ի վերոյ գտնու այն եղելութեան վրայ: Վերջին անգամ՝ ըսի այս երկու բառերուն բաժնարութիւնը պիտի գտնես ներկայիս շարունակութեան մէջ, Առ այժմ գանք պարանանդէսի դէպքին:

«Երէկուան պէս կը յիշեմ թէ՛ չեմ գիտեր որ քմահաճոյքս գոհացնելու համար, զիս պարասրահին մէջ ձգելով դուրս ելար, Հազիւ հինգ վայրկեան անցած էր որ զգացի թէ ձեռք մը թեւս կը բռնէր. գլուխս դարձուցի եւ քեզ տեսայ. կամ ճիշդն ըսելով կարծեցի թէ քեզ կը տեսնեմ, այնքան քեզի կը նըմանէր թէ՛ հասակով, թէ՛ ձգտագրեստով եւ թէ՛ գիմակով այն անձը որ ըսիս կը գտնուէր:

« — Բերի՛ր, հարցուցի քու կեղծ-  
եալիդ .

« — Այո՛, բայց նախ վաղ մը  
դառնանք, պատասխանեց :

Անշուշտ գիտես որ, դիմակներու  
տակ ձայները շուտ չեն զանազանուեր :

« Սկսանք պարել, դառնալ ցա-  
կառել : Եթէ մի քիչ ուշադիր ըլլայի,  
անհասկած պիտի գիտէի որ իմ գալի-  
սիկա՛ իր շարժումներուն մէջ՝ չ'ունէր  
այն թեթեւութիւնը, որ քեզի յատուկ  
է : Այսօր ապահովապէս չ'եմ կրնար ը-  
սել թէ՛ յիշուի՛ այն միջոցին չ'զգացի  
թէ խարուած եմ, Հաւանականաբար  
հասկցայ թէ պարծնկերս դուն չ'էիր,  
եւ հաւանականաբար ալ շարունակեցի  
տգիտութիւն ձեւացնել . վասն զի ոտ-  
նակոս եղած սիրտերու համար անա-  
կընկալ մը թմբեցողութիւնը դեղ մ'է . եւ  
ինձի պէս կիներ երբեմն պէտք ունին  
անզգայանալով ինքնաշարժ մեքենա-  
ներ ըլլալու . . . Այս ալ կայ որ եթէ  
այն ատեն չ'ափազանց զիւրազգած  
ըլլայի, ետքը չ'պիտի խնդայի ինչպէս  
խնդացի : Քառորդ փամու չ'ափ պարելէն  
յետոյ պիտի գտնուի եւ քանի մը գա-  
ւաթ ճնկելէն ետքը զիս քաշեց եւ սեն-  
եակ մը տարաւ . . .

« Այս միջոցին, դուն՝ յանձնա-  
բարութիւնս կատարելով՝ ինձի կը դառ-  
նայիր եւ զիս կամ ամեն կողմէ ինձի  
նման կին մը գտնելով մեր արարքը կը  
կրկնէիր . . .

« Սրբունս, եթէ տունսի մը մէջ  
կարգացուէր մեր այն գիշերուան դէպ-  
քը, անտարակուսելի է որ հիդիւնակին  
երեւակայութեան ծնունդ պիտի նկատ-  
ուէր . Մինչդեռ ես եւ դուն կրնանք  
վկայել որ իսկական կեանքը շատ անգամ  
աւելի անհաւատալի կացութիւններ  
կ'արտադրէ :

« Անդին, իմ գալիսիկա ինձի ան-  
հանգստութիւններ կուտար իր նորածա-  
շակ առաջարկութիւններով, որոնցմէ  
մին էր դիմակներ չ'վերցնել . . . Գիտես  
որ նորահնար բաները կը սիրեմ՝ այդ  
սէրն արեանս մէջն է, Եթէ այդ մո-  
լութիւնը չ'ունենայի, հարիւրին հարիւր  
կրնամ ըսել թէ իմ այժմեայ տեղս թա-  
փուր պիտի մնար . . .

« Տէր ողորմեա՛, կարծեմ թէ բա-  
րոյականութեան վերաբերեալ բառեր կը  
ցայտին գրչիս տակէն : « Մարգարիտ  
առաջի խոզակ » պիտի ըսէր Տէր-պապանս  
Բայց ինչ իրաւունքով . . .

« Մինչ այս մինչ այն, կատար-  
ուած իրողութեան ընդ իրագիկ եղած  
ենթադրելով, կ'երեւակայէի որ ինչ  
անուիլ եւ միանգամայն ծիծաղելի ծա-  
մածոններ պիտի ունենաս, եւ ինքն  
իրենս կանխաւ կը խնդայի :

« Միւս կողմէն ալ անզուսպ փա-  
փաք ունէի երեսը տեսնելու այն երա-  
նելիին, որ վերջին աստիճան ընտանե-  
բար կը վարուէր հետս իբր թէ բազմա-  
թիւ տարիներէ ՚ի վեր մէկ կեանքով  
ապրած ըլլայինք : Մանաւանդ խօսքեր  
ունէր, որոնք զիս թէ կը արտմեցնէին  
եւ թէ՛ կը հրճուեցնէին . . .

« Յանկարծ ձեռքս երկնցուցի, եւ  
դիմակը հանելով հալիւ փամանակ ու-  
նեցայ տեսնելու որ՝ ՚ի բաց առեալ անոր  
ձեւնոտուած ընչաքքը՝ երկու կաթիլ ջու-  
րի պէս ճիշտ քեզի նմանող անձ մ'է,  
ահա սենեակին դուռը կը բացուի եւ  
մուտք կուտայ երկու դիմակաւորներու,  
որոնց միոյն՝ օտարացի՛ գոսիւնը իմ գոս-  
իւնս եւ գալիսիկան շուարած մնա-  
ցած մարդուն գոսիւնին համանմաններն  
էին . . .

« Ես իսկոյն բաներ մը կուսնելով  
ոտք ելայ, մինչդեռ ետքի դիմակաւոր-  
ներէն մին նուազեալ կ'իյնար եւ միւսը  
խոյս կուտար : Փախողը նոյնիսկ դուն  
էիր, նուազեալը մայրդ էր եւ իմ կայ-  
տառ գալիսիկա հայրդ . . .

« Արդարեւ կը խնդամ, բայց եր-  
բեմն ալ կը տխրիմ : Ինչո՞ք հայր ու  
մայր . անշուշտ անմեղորէն մասնակցի  
ուզած էին՝ վարձքը վճարելով՝ այն  
զուարճութեանց, զորոնք յառաջիկայէր  
ոգի մը կարգադրած էր : Անշուշտ,  
գէթ անգամ մը աչքով տեսնելու մտեն  
չօչափել փափաքած էին հանրագուտ  
ձեռնարկի մը զարգացման նպատիչ  
միջոցներուն հզորագոյնը, զոր՝ ամիս-  
ներէ ՚ի վեր՝ օրաթերթերու մէջ յայտա-  
բարուած եւ յանձնարարուած կը տես-  
նէին « կարեւոր ազդ » « բարի գործ մը »  
« մարդասիրական ձեռնարկ մը » եւլն .  
եւլն . վերնագրերով :

« Ինչո՞ք հայր . իմ գոսիւնս զիս իր  
կիներ կարծեմ էր . . .

« Ինչո՞ք մայր . քու գոսիւնս քեզ  
իր ամուսինը կարծեմ էր . . .

« Բայց ո՞ր սատանան գրեցիք մը-  
ղած էր իբր իրանտացի հագնիլ ճիշտ  
մեր երկուքին պէս . . .

« Ինչ ո՞ր ալ ըլլայ, թէ՛ այս դէպ-  
քը եւ թէ՛ հորդ կողմէն ուղղուած ինչ  
ինչ անտեղի եւ նողկալի հարցումները  
այնքան ազդեցին մօրդ վրայ, որ՝ ըստ  
քու խօսքի՝ ծանրապէս հիւանդացաւ :  
Ասկէ դատ, շարունակ ամիս մը, ո՛չ  
հայրդ եւ ո՛չ մայրդ քեզ տեսնել չ'էին  
ուզեր : Բայց քո՛ւ ընթացքիդ իբր յան-  
դիմանութիւն, թէ ՚ի՛րենց վերաւորուած  
զգացողութիւնս իբր հետեւանք՝ այնքան  
օրեր վտարուեցար անոնց ներկայութե-  
նէն, այս կէտը բացատրելու մտողար,  
եւ թերեւս ալ աղէկ ըրիր . . .

« Սակայն, սիրելիս, կը տեսնեմ որ  
երբ քիչ մը ծանրաբան ըլլալու կը մի-  
տիմ, իսկոյն շիջերս կը թուլանան,  
ետեւէ ետեւ կը յօրանիմ, հակառակ  
կամքիս աչքերս կը գոցուին եւ վերջա-  
պէս կը զննամ . . .

« Ուստի կը վերադառնամ իմ հար-  
կադրեալ զուարթութեանս :

« Այո՛, չ'ափազանց խնդացի այն  
գիշեր, խնդացի պարահանդէսին մէջ,  
խնդացի կատրին մէջ, խնդացի սենեա-  
կիս մէջ, խնդացի անկողնիս մէջ, խն-  
դացի քունիս մէջ, հետեւեալ օրը խն-  
դալով արթնցայ եւ քու զայրոյթդ  
շարժեցի : Ալ անկէ ետքը չ'նստայի  
ատոր վրայ, գէթ քու առջեւ, թե-  
րեւս քիչ մ'ալ լալ պէտք էր, բայց  
միշտ կը խնդան անոնք, որոնց արգի-  
եալ է լալ . . .

« Ուրիշ ինչ պիտի գրէի . . . անա  
միտքս խանգարուեցաւ . կ'եցիր նայիմ  
« Հա՛, նամակիս սկիզբը զրուած  
վերջին անգամ բառերը պիտի բացատրէի  
Բայց նախ Արուսեակին վրայ կ'ուզեմ  
քանի մը խօսք ընել :

Շորուակիդի Ա. ՊԱԼԵԱՆ

ՎԱՐՇՈՒՀԻ ԿՈՒՋՈՒԻ  
— 0 —  
Պատուաւոր ընտանիքի մը երկու  
փոքրիկները դաստիարակելու հա-  
մար վարժուհիի մը պէտքը կայ :  
Գոհացուցիչ ամսական :

Դիմել « Արշալոյս » ի Տնօրինու-  
թեան :

ՍԱԼԻՄԱԿԱՆ ՀՂՐՃԸ  
— 0 —  
Ինչպէս գիտենք, Կ. Պոլսոյ  
կեդրոնական Ազգային Վարչութիւնը  
Երուսաղէմի յաւիտենական խնդիրը  
կարգադրել կարծեց, ըստ հրահան-  
գի ՎԵՆ, Կաթողիկոսին՝ վերջերս  
երեք Պատգամաւորներ զրկելով հոն,  
որպէսզի պատրիարք մը ընտրեն եւ  
տեղւոյն անմիաբանութիւնը Միա-  
բանեցնեն, խաղաղութիւնը հաս-  
տատեն Երուսաղէմի վանքին մէջ,

որ ազգին գլխուն կատարեալ փոր  
ձանք մը եղած է ու կըլլայ : Գէթ  
Վանքին հարստութիւններէն բան մը  
սպասողներն ու անոնց հետեակ ար-  
բանեակները այսպէս կըսեն ու կը  
հաւատան :

Պատգամաւորութիւնը, ի գլխիս  
ունենալով նախկին պատրիարք Օր-  
մանեան Սրբազանը, քանի մը օր  
առաջ հոն մեկնեցաւ, սակայն Պոլ-  
սոյ թերթերը կըսեն թէ՛ Միաբա-  
նիչ պատգամաւորութեան մէջ ան-  
գամ անմիաբանութիւն ծագած է,  
որովհետեւ Պատգամաւորութեան ան-  
գամներէն Պ. Վահան Թէքէեան,  
որ Պոլսոյ մէջ մարդ չի գտնուելու  
համար կեսարիայէն հեռագրաւ և  
յատկապէս կանչուեցաւ, իրեն հաց  
տուող ուսուցչական պաշտօն մը զը-  
հած ըլլալուն համար, ինչպէս կե-  
րեի, Երուսաղէմի վանքը Տօլմաժ  
էնթեռնէի զարնել կուզէ և որոշած  
է պատու իրակութեան տուած Տե-  
ղեկազրէն անջատ, և անհատական  
տեղեկագիր մը ներկայացնել ազ-  
գային Վարչութեան :

Այս խօսքով մենք կը հասկը-  
նանք թէ՛ Պ. Թէքէեան իր ձե-  
ռնպահի քաթիքայով, Սըկէ Նըկէ  
ձեռքին մէջը բան մը գրուելու կուզէ  
« պահելու » համար, այս պատճա-  
ռաւ է որ անհամաձայնութիւն կը  
սերմանէ պատգամաւորութեան մէջ  
ձեռնպահ մնալ ուզելով :

Հիմայ կը հասկցուի թէ՛ Երու-  
սաղէմ զրկուած պատգամաւորներու  
երկար շարքը ինչ բանի կրնայ ծա-  
ռայել . . . մինչև հիմայ :

Հոյոց ՎԵՆ. Կաթողիկոսն ալ  
էջմիածնի Գահուն վրայէն թող մը-  
տածէ թէ՛ 1914 Փետրուար 14  
թուական թուրքիոյ Հայոց Պատրի-  
արք Տ. Զաւէն Արք. Տէր Եղիա-  
եանի Կոնդակ մը զրկած է Երու-  
սաղէմի անկարգութիւնները կարգի  
բերելու տնօրինութիւնները փու-  
թաշնելու համար :

Մենք այդ Կոնդակը ի ստորև  
կ'արտագրենք իբր Տօղիւնակ :

ՊԱՏՁԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՆԴԱԿԻ  
— 0 —  
Ընկալաք զգրութիւն Ամենապատ-  
ուութեան Զերոյ յ 19 Դեկտեմբեր ան-  
ցելոյ 1913 ամի թ. 1043. Ընդ նորոյ  
կանոնագրի Ս. Յակոբեանց Վանուց  
Հայոց Երուսաղէմի, որով խնդրէ Հայ-  
րապետական յատուկ կոնդակաւ տալ  
Ձեզ իրաւունս յայտարարելոյ յանուն  
Մեր՝ միաբանիցն Ս. Յակոբեանց Վա-  
նուց, զի եթէ ոմանք ի նոցանէ այլեւս  
հակառակ կայցեն տնօրէնութեանց  
Ազգ. Ընդ. Ժողովոյ, չկատարելով  
զնոր կանոնագրին, այնպիսիքն անկցին

# ԱՆԱՆԵԱՆ ԵՂԲԱՐԻՔ

ՊՅՐԶԱԿ ԱՐՄՆՅ ՅԻ ԿՅՆԱՆՅ  
ՇԱՐԱ ԷՄԱՏ - ԷՏ - ՏԻՆ . ՍԱՆ ԺԱՉԷՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԴԻՄԱՑ

Մաքուր, արագ եւ երաշխաւորելի եւ մեր պատրաստած ԳՕՍԹԻԻՄ-  
ՆԵՐԸ ամեն անոնց համար, որոնք կուզեն հաշիւաւոր հագուստներ ու-  
նենայ. Զարիւտը գ, Անոյ .

որ ազգին գլխուն կատարեալ փոր  
ձանք մը եղած է ու կըլլայ : Գէթ  
Վանքին հարստութիւններէն բան մը  
սպասողներն ու անոնց հետեակ ար-  
բանեակները այսպէս կըսեն ու կը  
հաւատան :

Պատգամաւորութիւնը, ի գլխիս  
ունենալով նախկին պատրիարք Օր-  
մանեան Սրբազանը, քանի մը օր  
առաջ հոն մեկնեցաւ, սակայն Պոլ-  
սոյ թերթերը կըսեն թէ՛ Միաբա-  
նիչ պատգամաւորութեան մէջ ան-  
գամ անմիաբանութիւն ծագած է,  
որովհետեւ Պատգամաւորութեան ան-  
գամներէն Պ. Վահան Թէքէեան,  
որ Պոլսոյ մէջ մարդ չի գտնուելու  
համար կեսարիայէն հեռագրաւ և  
յատկապէս կանչուեցաւ, իրեն հաց  
տուող ուսուցչական պաշտօն մը զը-  
հած ըլլալուն համար, ինչպէս կե-  
րեի, Երուսաղէմի վանքը Տօլմաժ  
էնթեռնէի զարնել կուզէ և որոշած  
է պատու իրակութեան տուած Տե-  
ղեկազրէն անջատ, և անհատական  
տեղեկագիր մը ներկայացնել ազ-  
գային Վարչութեան :

Այս խօսքով մենք կը հասկը-  
նանք թէ՛ Պ. Թէքէեան իր ձե-  
ռնպահի քաթիքայով, Սըկէ Նըկէ  
ձեռքին մէջը բան մը գրուելու կուզէ  
« պահելու » համար, այս պատճա-  
ռաւ է որ անհամաձայնութիւն կը  
սերմանէ պատգամաւորութեան մէջ  
ձեռնպահ մնալ ուզելով :

Հիմայ կը հասկցուի թէ՛ Երու-  
սաղէմ զրկուած պատգամաւորներու  
երկար շարքը ինչ բանի կրնայ ծա-  
ռայել . . . մինչև հիմայ :

Հոյոց ՎԵՆ. Կաթողիկոսն ալ  
էջմիածնի Գահուն վրայէն թող մը-  
տածէ թէ՛ 1914 Փետրուար 14  
թուական թուրքիոյ Հայոց Պատրի-  
արք Տ. Զաւէն Արք. Տէր Եղիա-  
եանի Կոնդակ մը զրկած է Երու-  
սաղէմի անկարգութիւնները կարգի  
բերելու տնօրինութիւնները փու-  
թաշնելու համար :

Մենք այդ Կոնդակը ի ստորև  
կ'արտագրենք իբր Տօղիւնակ :

ՊԱՏՁԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՆԴԱԿԻ  
— 0 —  
Ընկալաք զգրութիւն Ամենապատ-  
ուութեան Զերոյ յ 19 Դեկտեմբեր ան-  
ցելոյ 1913 ամի թ. 1043. Ընդ նորոյ  
կանոնագրի Ս. Յակոբեանց Վանուց  
Հայոց Երուսաղէմի, որով խնդրէ Հայ-  
րապետական յատուկ կոնդակաւ տալ  
Ձեզ իրաւունս յայտարարելոյ յանուն  
Մեր՝ միաբանիցն Ս. Յակոբեանց Վա-  
նուց, զի եթէ ոմանք ի նոցանէ այլեւս  
հակառակ կայցեն տնօրէնութեանց  
Ազգ. Ընդ. Ժողովոյ, չկատարելով  
զնոր կանոնագրին, այնպիսիքն անկցին

ընդ պատասխանատուութեամբ եւ պատ-  
ժով :

Զմտնելով ի քննութիւն ըստ էու-  
թեան հիմնական տրամադրութեանց եւ  
յօդուածոց գործող կանոնադրութեան  
1888 ամի եւ նորոյ կանոնագրի 1913  
ամի . այլ առաջի աչաց ունենալով  
զանցեալ եւ զներկայ իրադրութիւնս  
եւ զամենայն հանգամանս Ս. Յակոբե-  
անց վանուց, զերկպառակութիւնս եւ  
զրեւոյթայ զիճակ միաբանութեան  
Հայոց Երուսաղէմի, նաեւ առանձնապէս  
ի նկատ առեալ մեր, զի Պատրիարքն  
Հայոց Երուսաղէմի է գահակալ ցիկանս  
Առաքելական Աթոռոյն եւ Պետ միաբա-  
նութեան Մեր ո՛չ համարիմք նպա-  
տակայարմար եւ օգտակար վասն խա-  
ղաղացման միաբանութեան եւ բա-  
րեկարգութեան վարչական-եւլն-տա-  
կան գործոց վանուցն, նախ քան  
զրեւոյթութիւն Պատրիարքի զհիմնական  
փոփոխութիւն մուծանել ի գործող կա-  
նոնադրութիւն վանուցն, մանաւանդ  
զի Պատրիարքն Հայոց Երուսաղէմի  
պարտ է ընթանալ ըստ ամենայնի հա-  
մաձայն կանոնադրութեան եւ հսկել ի  
վերայ ուղիղ գործադրութեան նորա (յօդ.  
17 րդ Ազգ. Սահմանադրութեան), ուս-  
տի եւ Մեր բարեւոյ վարկանմբ նախ՝  
տալ կատարել զընտրութիւն Պատրիար-  
քի, զորմէ առաջարկեալ եմք կոնդա-  
կաւ Մերով ի 55 Դեկտեմբերի 1912 ամի  
ընդ համարաւ 1617, յանուն նախորդ  
Պատրիարքին Տ. Յովհաննէս Սրբազան  
Արքեպիսկոպոսի, ապա թէ իրաւաստ  
լեալ ընդ Պատրիարքին Երուսաղէմի,  
ըստ մտաց 85 րդ յօդուածոյ կանոնաց  
Միաբանական Աթոռոյ Սրբոց Յակոբե-  
անց, առել զանհրաժեշտ բարեփո-  
խութիւնս ի կանոնադրութեան վասն  
բարեկարգելոյ զվարչական եւ գտնուե-  
սական-կալուածական գործս վանօրէից  
եւ Ս իաբանութեան Հայոց Երուսաղէմի :

Իսկ վասն զեկավարելոյ զպատրի-  
արքական ընտրութիւն եւ առժամապէս  
կանոնաւորելոյ զգործս միաբանութեան  
հաստատութիւն նորոյ Պատրիարքի,  
եւ վասն քննելոյ զընտրական հաշիւս,  
զվիճակ կարուածոց եւ ստացուածոց վա-  
նօրէից Հայոց Երուսաղէմի, որպէս եւ  
զապօրինի վարմունս եւ զանկանոն գործս  
ոմանց միաբանից, անհրաժեշտ վարկա-  
նեմք, ըստ հայեցողութեան եւ ընտրու-  
թեան Ամենապատուութեանց եւ Ազգ.  
Երախտանական Ժողովոյ, առանց յա-  
պաղման առաքել լիազօր յանձնախումբ  
մի. կազմեալ ի ձեռնհաս եւ ի հեղինա-  
կաւոր անձանց, յորոց մինն լիցի արքե-  
պիսկոպոս կամ եպիսկոպոս :

Զայս ամենայն առաջարկելով Ամե-  
նապատուութեանց վասն խաղաղեցու-  
ցանելոյ եւ կանոնաւորելոյ զմիաբանա-  
կան կեանս եւ զգործս Ս. Յակոբեանց  
վանուց Երուսաղէմի, որ է զլլաւոր  
նպատակ Մեր եւ Ձեր ամենեցուն յամե-  
նապատուութեան միջոցաց, խոհականու-  
թեանց եւ հեռատես տնօրէնութեան Ա-  
մենապատուութեանց եւ Ազգ. Երեւոյ .  
Ժողովոյ :

Օրհնեմք զՁեզ եւ զամենայն ան-

զամս Ազգ. Երեսի. Ժողովոյ. մաղթե-  
լով ի Տեառնէ պարգեւել Ձեզ կար եւ  
կարողութիւն յօգուտ եւ իշխանութիւն  
ազգային հաստատութեանց եւ գործոց  
Մերոց: Ողջ լերուք. զօրացեալ շնոր-  
հօք Ս. Հոգւոյն եւ օրհնեալ ի Մէնջ  
Ամէն:

ի 14 Փետ. 1914 աւել  
Էջմիածին

ԱՊՐԻԼ ԿՈՒՉԵՄ

Տառապանքի կոյտերուն սակ ընկճում  
Մա՛յր իմ. կուրսւ. այժեռովը խոցոսած.  
Արցունքներու. որ այտերու կ'իջնեն վար.  
Ո՛հ, արիւն եւ ու արիւն...

Թշուառ հոգւոյս սերն ու յոյսը կողկողագին  
կը հեկեկան, կը հառաչեն անձկագին.  
Գուցէ անոնք. որ մը մեռնին խեղճ ու կրակ  
Եւ հոգիս ալ՝ իրենց սակ...

Վիշտերս՝ որ ուտերս վար կը ճընջեն.  
Ձիւ շիր առ շիր մահասանը կը մեծեն.  
Միկնջ 'նոզիս' որ կուրծքիս սակը կը հազցի  
Անհանգի՛ս եւ անհանգի՛ս...

Ո՛հ, մա՛յր իմ, կ'ուզեմ վերջ տալ այս խեղ  
կեանքիս  
Երբայ հանգչիլ ազատ աշխարհն երկնային  
Հետեւ մարդոց խօլ կիրթերէն բունաւոր...

- Բայց ո՛չ մայրիմ, կ'ուզեմ ապրիլ.  
Չարին հանդէպ բարութեանս մախառիլ.  
Վիշտերուս դեմ մոլորեցաւ պայտարիլ.  
Այս պիտ' ըլլայ իմ կորոյն յարսանակի:  
Արդ եկուր մա՛յր, դողողը շրթներդ դի՛ր  
ճակիս.

Ապրիլ կ'ուզեմ. դե՛ռ ապրիլ, փրչասանիս  
Մեզն անդորր ու յոյն...

Գահիրէ ԱՀԱՐՈՆ ՄԱԼԽԱՍԵԱՆ

ՆԵՐՍԷՆ ԵՒ ԴՈՒՐՍԷՆ

Էջմիածին եւ ԴՈՂ

Կովկասի թերթերը կը գրեն թէ՛  
Մայիս 3 ին. անձանօթ (ժանօթ...)   
գողեր էլ միաձնի գանձատան պատը  
ժակած եւ կեղծ բանալիով գանձա-  
տան դուռը բանալով գողցած ու  
տարած են շղթայով պատէն ամ-  
րացուած դրամարկը. հոն մեծ  
գումար մը գտնելու յոյսը ունեւա-  
լով:

Ստուգիւ հոն 100,000 ռուբլի  
կայ եղեր, բայց օր մը առաջ պան-  
քան տրուեր է, եւ գողերը միայն  
իրենց ըրած ծախքերուն ու ընթացիկ  
աշխատութիւններուն փոխարէն մօ-  
տաւորապէս 300 ռուբլի մօտ գու-  
մար մը գտած են, որ նոյն իսկ  
բարեկամացակ զոհողութիւններու  
համար իրենց ըրած ծախքերը չի  
գողեր...

Կ'ըսուի թէ էլ միաձնի գողը  
«Ներսէն» է, արդէն գողերէն  
բոլորն ալ ներսը կըլլան. Եթէ  
կարելի է զգուշանալ գողերէն,  
անմիջապէս փութանք յայտարարել  
թէ՛ գողութեան այս հիւանդութիւ-  
նը աւելի եւ տարափոխիկ է քան  
ժանտախտը, ու պէտք է անմիջա-  
պէս հարկ եղած ձեռնհաս տեղերը  
դիմում ընել, այդ սոսկալի համա-  
ճարակին մուտքը արգելելու նպա-  
տակաւ, թէ՛ ամեն ազգային հաս-  
տատութիւններէ եւ թէ՛ մասնաւո-  
րապէս՝ Գահիրէի եւ Աղէքսանդրիոյ  
ազգային գանձատուններէն, այդ

գումարները ամրափակ գողերով ու  
արթուն պահապաններ կարգելով  
ասոնց առջև. ետին ու վրան:

Ասկէ զատ՝ զիտնալու է նաև  
որ, շատ անգամ պահապաններն  
անգամ անօգուտ կըլլան, անոնք ալ  
«Ներսէն» եղած ըլլալուն համար  
Ուստի պէտք պիտի ըլլայ համաճա-  
րակին դէմ խտտամբեր ֆարանթիմա  
մը հաստատելով անոր մուտքը իս-  
պառ արգելել երկրէն ներս...  
Եթէ ասիկա կարելի ըլլայ:

Ա.Ձ.Գ.Ա.ՅԻՆ

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

Հինգշաբթի օրը «Արշալոյս» ի  
Տնօրէնը Առաջնորդարան երթալով,  
կէս ժամու չափ տեսակցեցաւ Ա.  
Ռաջնորդական տեղապահ Տէր Թոր  
գոմ Եպիսկոպոսի հետ զանազան  
խնդիրներու մասին:

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Ասկէ յառաջ ծանուցինք թէ՛  
ի նպատակ վերջէկի (Կեսարիա) Մես-  
րոպեան վարժարանին սարքուած  
վիճակահանութիւնը տեղի պիտի ու-  
նենայ ի Պէյն-էլ-Սուրէն Մեծ Սր  
ճարան Հայկականի մէջ:

Մեզի ուղղուած նամակէ մը կը  
տեղեկանանք թէ՛ ամսոյս 7 ին  
Կիրակի օրը քաջուած է յիշեալ վի-  
ճակահանութիւնը եւ շահած են հե-  
տեւալ թիւերը. 347, 345, 20,  
461, 227, 169, 252, 193, 182,  
144, 313, 390, 383, 280 եւ 261

Շահող տոմսերը պէտք է ներ-  
կայացնել Ալթունեան Եղբարց վա-  
ճառատունը, ի Պէյն-էլ-Սուրէն:

ՏԵՂԱԿԱՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ ՄԸ

Էլ Սէյիտ էլ Սուլեյման, որ  
քանի մը օրէ ի վեր Եգիպտոս կը  
գտնուի, Վ. Օմար փաշա Թօսուէին  
այց մը տալով իր ջերմագին շնոր-  
հակալութիւնները յայտնած է անոր,  
այն չքնաղ ծառայութիւններուն  
համար, որ Տրիպոլիոյ պատերազ-  
մին ժամանակ ն. Վսեմութիւնը  
մատոյց Թուրքիոյ եւ Տրիպոլեան  
Արաքներուն:

— Սայիտ էլ Սուլեյման Կ. Պօլիս  
ալ պիտի այցելէ:

ԳԱՏԱՊԱՐՏՈՒԹԻՒՆ

Կարգապահական առեանը երեք  
ամսուան առանց ամսականի դա-  
դարի դատապարտած է Ազատի  
նստիկանութեան Տեսուչը:

ՆՇԱՆԱՌՈՒԹԻՒՆ

Անցեալ Շաբաթ երեկոյ ի Շուպ-  
րա Գահիրէի. Սելիմ Պէյ Չանա-  
նիբի բնակարանին մէջ տեղի ու-  
նեցած է նշանախօսութիւնը Պ. Մի-  
շէլ Գահիրէ, ընդ Օրիորդ Լինտա  
Չանանիբի:

Պ. Միշէլ Գահիրէ Դիւանապետն  
է ներքին Գործոց նախարարութեան  
Մամլոյ Գրասենեկին եւ կարող ու  
գործունեայ անձնաւորութիւն մ'է  
յարգանքի արժանի:

Մեր սրտագին շնորհաւորու-  
թիւնները ապագայ ամսին:

ԱՇԽԱՏԱՆՈՑ

ԱՐՈՒՆՏՏԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԸՆԹԱՑԻԿ ՓՈՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ

Ն. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Օրերայի Հրատարակիչ վրայ, Բրիտանաց Պատին դիմաց:

Փորագրութեան արուեստի բոլոր ճիւղերը մասնագիտօրէն կը կիրարկուին  
մեր աշխատանոցին մէջ՝ կատարելալ ճշգրտութեամբ: Առեւտրական գրասեն-  
եակներու յատուկ պլաններով միջնորդութիւն տրուի: Ինչպէս՝ Տարտոն, պիւնկտորեոն պղինձէ  
եւ քաւչուէ քիմիկաթ քորդ քիմիկաթ եւ այլ օրոնք մեր տրամագրութեան տա,  
կը գտնուին դիւրամատչելի գններով:  
Impression en Relief

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ

—\*—

ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԸ

Պաղատի եւ Անատոլիոյ Երկա-  
թուղիներուն վերաբերեալ խնդիր-  
ներու մասին խորհրդակցելու մա-  
մար:

Պօլսոյ Ելեմտական Նախարար  
Ճավիտ Պէյի ապարանքին մէջ գու-  
մարում ունեցած են անատոլիոյ  
Երկաթուղիներու ընդհանուր Տնօրէն  
Պ. Հիւկէն եւ գեր Տնօրէն Պ. Կիւն.  
Թէր եւ հանրօգուտ շինութեանց նա  
խարարութեան Երկաթուղիներու  
Տնօրէն Մուխթար Պէյ, Ուրիշ Ժո-  
ղով մ'ալ պիտի գումարուի կ'ըսէ  
Ազաւամարս:

— Թուրքիոյ մէջ կենաց, ընչից  
եւ պատուոյ ազատութեան գոյու-  
թիւնը ցայտուն կերպով ապացու-  
ցանելու համար, Իշմիթի մէջ աւա-  
զակներու կողմէ առեւտրուած է  
Պէլէքքաջի մը, որուն կենաց փո-  
խարժէքը 6000 սուկի նշանակուած  
է աւագակներուն կողմէ:

Թէև պայտօնական անհրաժեշտ  
դիմանմանը կատարուած են Վար-  
չապետին մօտ, բայց կ'ըսուի թէ՛  
անոր ծառաներուն միջոցաւ տեղի  
կուլթինն առնուած է օր՝ Պէլէքքա-  
ջին կարելի չ'պիտի ըլլայ առանց  
փրկանքի ազատել, այդ միջոցով  
Օսմանեան գանձարանէն դուրս ել-  
լելը հաւանական երեցած գումարին,  
արդի մեծ փոխառութեան պարա-  
գաններուն մէջ՝ կարևորութենէ զուրկ  
եղած ըլլալը հաստատուած լինելով:

ՌՈՒՄԻԱ ԵՒ ՌՈՒՄԱՆԻԱ

Ռուսիոյ արտաքին գործոց նա-  
խարար Պ. Սազոնօֆ Ս. Բէթրսպուր-  
կէն Պուրէշ մեկնած է:

Կ'ըսուի թէ այս ուղևորութեան  
նպատակն է Ռուսիոյ պետական  
մարդոց հետ համաձայնիլ, արգի-  
լելու համար Թուրքիոյ եւ Յունաս-  
տանի միջև վերջին գէպերուն հե-  
տեւանքով հաւանական երեցած պա-  
տերազմը:

ՀԵՌԱԳԻՐ

Լոնտոն 11 Յունիս. — Սեչանիկ  
հասկող գաղթականներուն թիւը  
90,000 ի կը հասնի:

Կ. Պօլիս 11 Յունիս. — Թա-  
շեաք պեյ Տաւր օրի յարի պիտի  
մնայ Իզմիրի մէջ: Ներքին Գործոց  
Նախարար Պանտալիսի մէջ փայ-  
ղուն ընդունելութեան արժանացած  
է: Դիւանաւորներուն թուոյն մէջ  
հայ երևելիներ եւ հայ դպրոցա-  
կաններ գտնուած են, որոնք ժողովե-  
լիունց մը նուիրած են:

Նախարար Պանտալիսի մէջ  
ֆանի մը ժամ կենացէ յետոյ, մաս-  
նաւոր կառախումբով Պաշրֆէսի  
մեկնած է:

Լոնտոն 11 Յունիս. — Պ. Վե-  
նէզիոյ խօսելով խորհրդարանին  
մէջ քսաւ թէ՛ Յոյն կառավարու-  
թիւնը որոշած է 500,000 հոգիանոց  
բանակ մը կազմակերպել:

Այս միջոցները ձեռք պիտի առ-  
նուին Յունական սահմանազխում եւ  
երկրին պաշտպանութեան համար:  
Աւելի ուշ այս մասին իր ծրագր-  
ները պիտի մատուցանէ կառավա-  
րութեան:

Լոնտոն 11 Յունիս. — Բ. դուրը  
պաշտօնապէս հարողեց Յունական  
կառավարութեան թէ՛ կարելի ի  
գործ պիտի դնէ պաշտպանելու հա-  
ւար Յունաց ինչք եւ կեանքի.  
թէ՛ արդէն պէտք եղած հոստաններ-  
ըր դրկած է կառավարիչներուն.  
վաշիներուն եւ զինուորական հրա-  
մանասարներուն, որպէսզի յոյնե-  
րուն իրաւունքները պաշտպանուին  
եւ խոչանակուէին գերմ մեան:

Աթէնք 11 Յունիս. — Տիգրեա-  
կան Պատրիարքը բազմաճակատ պատ-  
գամաւորութիւն մը կը դիմէ Երո-  
պական մայրաքաղաքներ՝ թուրք  
հաշտման փնտրելու երեսնէ՛ Յոյներուն  
մասնուած արգահատելի կացութիւնը  
պարզելու համար:

Այս պատճառներով թուրք եւ  
յոյն յարաբերութիւնները խրոչուելու  
վիճակին մէջ կը գտնուին:

Աթէնք 12 Յունիս. — Թուրքիոյ  
Յոյներուն դեմ եղած հաշտման օր-  
դրսօրէ կը սասկանայ: Կանոնա-  
ւոր գործերէ բաղկացած աւագակա-  
խումբեր Այվազը ֆալսֆր պաշա-  
րած են եւ սուլայի շարդ կուտան  
բնակչութիւններուն:

Այս անհանգի կացութեան հե-  
տեւանքով Արսաֆի գործոց նախա-  
արար մեծ Տէրութեանց ղեկավարնե-  
րուն տեղեկացուց թէ՛ Յունաստան  
հակառակ իր հաղաղասիրական  
փառախօսութեան, անտարբեր չի կրնալ  
մնայ այս արտակարգ հաշտման փն-  
տուն հանդէպ:

Պ. Վենէզիոյ խօսելով երեկ  
խորհրդարանին մէջ, յայտարարեց  
թէ՛ կացութիւնը թեպէտեւ ծանր է,  
բայց կառավարութիւնը արթուն կը  
հսկէ միշտ:

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Գահիրէի Տ. Կ. — Մեք. անհատի  
մը ունեցած ազատութեան մէջ կ'ըմ-  
բանենք ազգի մը վայելած ազա-  
տութեան չափանիշը: Եթէ մեզ կա-  
ռավարողները բռնաւորներ ընդու-  
նինք, անոնց մանրանկարները աւելի  
բազմաթիւ են:

# T I R I N G

## Թ Ի Ր Ի Ն Ք

ԳՈՎԱԲԻ ՓՈՂՈՑ ՆԱԿԻՆ ՓԱՍՏԱԼ

Վ. Ա. ՋԱՆՈՒՍԱՆՆ ԿԻՑ

ԵՂԱՆՈՎԻՆ ՅԱՐՄԱՐԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՆՈՐՈՒԹԻՒՆԵՐ ՀԱՍՍԵ ԵՆ  
ՓՈՒԹԱՅԻՔ ՕԳՏՈՒՂ

Կ. Պօլսոյ ամենաճանձօթ ԹիՐԻՆԿ Տան Գահիրէի  
նորահաստատ Մասնաճիւղն է .

### ԾՈՎԱՅԻՆ ԵՒ ԳԱՂԹԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Ղ. ԵՆՈՎՔԵԱՆ ԵՒ ԸՆԿ .  
ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ ( Եղիպտոս )

Շարաթական կանոնաւոր երթեւեկ .

Միացեալ Նահանգներու , Գա.  
նատայի եւ Հարաւային Ամերիկա  
յի համար .

Գաղթականներու համար չափա.  
ւոր գին .

Աչքի քննութիւնը ձրխարստ  
կը կատարուի տեղւոյս մէջ ,

Մանրամասն տեղեկութեանց  
համար դիմել Գործակալութեան .

ՄՕՀԱՄԷՏ ԱԼԻ ՀՐԱՊԱՐԱԿ

Հեռագրական Հասցէ -- ԿՆՆՕԳՕ

Փոսթարկի Թիւ 897

Թղթի գաւառներու մէջ

Փոխ - գործակալներ կը փնտռուին

### ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ԱՂՔԱՍԱՆԵՍՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԳԱՀԻՐԷԻ ՀԱՅՈՑ

242 գ թիւով .

Գահիրէ, 7 Յունիս 1914

Առաջին պարզու

Թիւ	5485	Ղրշ	Ողջ	4000
"	4032	"	"	400
"	13254	"	"	200
"	5881	"	"	100
"	1956	"	"	"
"	11440	"	"	"
"	4942	"	"	"
"	9161	"	"	"
"	1491	"	"	"

Հետեւեալ 40 թիւերը կը շահին 70ա.  
կան դրուշ :

142	308	433	543	1195	1707	2500
2639	3835	5082	5135	5136	5692	
6103	6146	6414	6666	7233	7380	
8207	8275	8676	8721	9048	9369	
9745	9831	10821	10926	11129		
11924	11946	12111	12530	13436		
13921	14062	15357	15567	15652		


### ՓՈՐԱԳՐԻՉ

## Ա. ՄԻՆԷՄԵԱՆ

ԶԻՆԳՕԿՐԱՔ

Մոնթանէս Ալի Փողոցին վրայ  
ՇԱՐԱ ԹՕՐԿՈՒՄԱՆ

THE SINGER MANUFACTURING Co



Շարա-էլ-Մզրապի Տափիզ Պրայնի սեփականութեանը մէջ .


Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Սինկերներն են եւ ասոնցմէ  
մինչեւ ցարդ 22,000,000 ծախուած է :

400 հ աւելի վկայական եւ մեքայներով վարձատրուած, Երաշխատեալ մեքենաներ .

ԱՄԵՆԷՆ ՄԵՐ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանախիսին մէջ ստացած է .  
ՀԱՅՐԱՅԹԻՉ ԹՈՒՐԿԻՈՑ ՀԱՅՐԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ  
ԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԳՈՒՆԻՔԻՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԳՈՒՆԵԱՑ  
ՀԱՅՐԱՅԹԻՉ Ն . Բ . ԵՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ



Կեղծերէն զգուշանալ ,  
ուշագրութիւն գարձնել  
իւրաքանչիւր եքենայի  
վրայ Սինկերի ներկայ  
յաւակնաշիջ

Ձրի դասեր և նորոգու.  
թիւներ , յաճախորդաց  
ուրուիւրուն մէջ :

Վճարմանց գիւրութիւն  
Փոխանակութիւն հիներու  
նորոգութիւն ամեն կարգի  
Մեքենայից

Գին ՉԱՓ . . . . .  
ԱՇԽԱՐՀ . . . . . ՅՈՒՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԻՋ ՄՈՍՆԱՃԻՒՂԵՐ ՈՒՆԻ

### ՃԱՇԱՐԱՆ ՎԵՍՊՈՒՐԱԿԱՆ

ՊԱՋԱՐ ՄՐԵՐՈՒՐ ԹԻՒ 19  
ԱԻՑՏԻՍ ՊՕՑԱՃԵԱՆ

Մեր ճաշարանին մէջ կը պատ  
րաստուին եւրոպական եւ Արեւել.  
եան ընտիր կերակուրներ . պան.  
դուխտ երիտասարդները եթէ ան.  
գամ մը այցելեն մեծապէս գոհ  
պիտի մնան մատչելի գիներէն և  
սպասակութենէն . 14

### ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

« Արշալոյս » ի ամբողջ Ռումա.  
նիոյ գործակալութիւնը ստանձնած  
է Տիար Կ. Փիլիպպոսեան , որուն  
պէտք է զիմել թերթին վերաբեր.  
եալ ամէն գործերու համար .  
Մեր գործակալին հասցէն է .

Mr. G. B. Pilibossian  
F. American  
83 St. Mangalia  
(Roumanie) Constantza

Նոյնպէս Արաբիկերի գործակալն  
է Տիար Միսաք Ա. Մուրեան , ո.  
րուն պէտք է զիմել թերթին վե.  
րաբերեալ չորր գործերու համար .

### ՄԱՐՏԻՐՈՍ ԹԱԴԷՈՍԵԱՆ

ԴԻՐՉԱԿ ՎԱՃՈՒԿԱՆ

Փոխադրուած է Շարա Ա. պտ էլ Ազիզ  
Ապարիի Գարպոյի մօտ .  
1-50

Անոնք որ ճաշակաւոր զօւրիւն մ.  
ւնենալու համար զանազ ան տեղեր գի.  
ւած ու դժգոհ մտացած են , թող ան.  
շամ մը մեր վաճառատունը այցելեն .  
պատրաստ եմ իրենց հետ պայմանաւոր.  
ուիլ որ՝ եթէ իրենց լանձնարարութիւր  
նր գոհացուցիչ չ'գտնեն , կանխավճարը  
ամբողջովին ետ պիտի ստանան .

Այս պայմանը՝ ճաշակաւոր հագ.  
ուելու փոփոքողներուն համար , նը.  
պատաստուր առիթ մը պիտի ըլլայ .

Ապառիկ սպասարանները նկատու.  
ղութեան շէն առնուելը , եւ անոնք որ  
ինծի կը գիմեն , զիւրաւ կրնան ըմբռ.  
նել ապառիկին տարբերութիւնները .  
թէ գործի մաքրութեան եւ թէ գի.  
նեքու մասին .

1-50 ՄԱՐՏԻՐՈՍ ԹԱԴԷՈՍԵԱՆ  
ԵՄԱՆՈՒՑՈՒՄ  
Աղէքսանդրիոյ և Գաւառներու  
համար գործակալներու պէտքը  
կայ . փափաքողները կրնան զիմել  
« Արշալոյս » ի խմբագրութեան հաս.  
նէին .

# GRAND BAR ABBAS

ՇԱՐԱ ՊԱՊ ԷՂ ՊԱՀՐԻ ՆԱԽԿԻՆ ՖԼԱՇԻՆ ՏԵՂ  
ՍԵՓԱԿԱՆԱՏԷՐԻՔ Ս . ԲԱԼԱՄՈՒՏԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐԲ

Անցեալ Մայիս 1 ին տեղի ունեցաւ բացուելու Կոստ Պառ Ապպասի . որ կոչուած է ըլլալ ընտանեկան հաւաքախաչ մը . ձոխ եւ ամենամաքուր  
սպասներով կահաւորուած .

ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ . ԽՆԱՄԵԱԼ . ԱՐԱԳ ԵՒ ԿԱՆՈՒԱՒՈՐ .

Կը հրաւիրուին Հայ ընտանիքները , յետ այսու իրենց ժամագրովայրը ընտրել Կոստ Պառ Ապպասը . վստահ ըլլալով թէ՛ գոհ պիտի մնան իրենց ընծայե.  
լի նախապատուութենէն :

Կոստ Պառ Ապպասը մասնաւոր խնամքով ընտրած է իր բոլոր ըմպելիները՝ և գարեջուրներուն ամեն լաւագոյն տեսակներուն հետ , առաջնութիւն  
պիտի տրուի « ԼՕՎԷՆ ՊՐԱԻՆ » տեսակին՝ որ ճաշակաւորներուն քով մեծ ընդունելութիւն գտած եւ համբաւեալ է .  
Օ՛ն ուրեմն . փութացէք գէպի Պար Ապպաս .

Ս . ՓԱԼԱՄՈՒՏԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐԲ